

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել տեղական ինքնակառավարման օրվա առթիվ

10.11.2023

Շնորհավորում եմ տեղական ինքնակառավարման մարմիններին և ՏԻՄ աշխատակիցներին տեղական ինքնակառավարման համակարգի ստեղծման 27-ամյակի առթիվ:

Առավելագույնս մոտ կանգնած լինելով համայնքի բնակչին՝ ՏԻՄ-երը յուրատեսակ ուժ են ոչ միայն համայնքային խնդիրների վերհանման, այլև դրանց լուծմանը հասնելու ճանապարհին: ՀՀ Սահմանադրությունն ու նրանից բխող օրենսդրական դաշտը լայն իրավական հնարավորություն են ընձեռում համայնքային խնդիրների լուծման համար, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններն այդ խնդիրների անմիջական հասցեատերն ու պատասխանատուն են՝ իրենց գործունեությամբ մասնակցելով պետության վարկանիշի ձևավորմանը:

Յուրաքանչյուր համայնք միասնական պետության կարևորագույն օղակն է և տեղական ինքնակառավարման մարմնի աշխատանքի գնահատականի մեջ քաղաքացին ամփոփում է ողջ պետական համակարգի աշխատանքը, ուստի արժանապատիվ ապագայի համար անհրաժեշտ է համայնքների ու քաղաքացիների համատեղ աշխատանք՝ հիմնված փոխօգնության ու փոխվստահության վրա:

Եվս մեկ անգամ շնորհավորելով տեղական ինքնակառավարման մարմիններին և ՏԻՄ աշխատակիցներին՝ մաղթում եմ հաջողություն, նպատակասլացություն, հաստատակամություն և շարունակական առաջընթաց: